

ՀՀ վարչապետի աշխատակազմ

2023-2025

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2023

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Մինչև 2018 թվականը Վարչապետի աշխատակազմը գործել է որպես «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 2-ի N 726-Ն որոշման: Այնուհետև 2018 թվականի մայիսի 10-ի «Վարչապետի աշխատակազմ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի համար N 500-Ա որոշման համաձայն ստեղծվել է Վարչապետի աշխատակազմը:

Վարչապետի աշխատակազմի խնդիրն է ապահովել վարչապետի և փոխվարչապետերի լիազորությունների իրականացումը, կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի մշակումը, ինչպես նաև կառավարության ծրագրի մշակման հարցում մասնագիտական, տեղեկատվական և տեխնիկական աջակցության ցուցաբերումը Վարչապետին:

Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է օրենքների, Կառավարության աշխատակարգի և իր Կանոնադրության հիման վրա: Աշխատակազմն ապահովում է ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման վերահսկողությունը:

2018-2021 թվականներին վարչապետի աշխատակազմի կողմից իրականացված և իրականացվող ծրագրերի և միջոցառումների շրջանակներում ցուցաբերվել է աջակցություն քաղաքական կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա: Յուրաքանչյուր տարի աջակցություն է տրամադրվել 11 հասարակական կազմակերպությունների, որոնք իրականացրել են՝ կրթական, մշակութային միջոցառումներ, տոնախմբություններ, զանազան քննարկումներ, գրասենյակների պահպանման ծախսեր: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 13-ի N-139-Ա որոշմամբ 2021 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցները բաշխվել են ընտրությունների արդյունքում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքների միջև:

2019 թվականից աշխատակազմի կողմից «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենքի գլուխ 5 հոդված 11-ի համաձայն իրականացվում է Պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման ֆինանսավորում:

Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում՝ Երևան քաղաքի և մարզային ստորաբաժանումների, մարզպետարանների և այլ պետական մարմինների միջգերատեսչական ցանցի և համացանցի կենտրոնացված գնում /մինչև 2022թ. առաջին կիսամյակի ավարտ/: Աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում ապահովվում է նաև Հայաստանում, սփյուռքի համայնքներում, արտերկրում Հայաստանի մասին լիարժեք և հավաստի տեղեկատվության մատչելիություն, տեղեկատվության միջոցով արտաքին աշխարհի հետ հաղորդակցություն ու կապի ամրապնդում, հասարակական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների վերաբերյալ իրադարձությունների լուսաբանում և տարածում, որի նպատակն է տեղեկատվության տարածման միջոցով մերօրյա իրականության, հայ ժողովրդի գրական-մշակութային ժառանգության տարածումը և հանրահոշակումը, Հայոց պատմությանը, մշակույթին, հայ մեծերին նվիրված հաղորդումների, հոդվածների, ակնարկների և լրագրության այլ ժանրերով նյութերի պատրաստումն ու հրապարակումը: Աշխատակազմի կողմից ամենօրյա աշխատանքներ են տարվում ի նպաստ Սփյուռք ներուժի բացահայտմանը, ՀՀ զարգացման գործընթացներում ներգրավվածությանը՝ Հայաստան-Սփյուռք համատեղ ծրագրերի իրականացմանը, Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը և զարգացմանը: Մեծ կարևորություն է տրվում Ազգային ինքնության պահպանմանը՝ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացմանը:

Վարչապետի աշխատակազմի կողմից մեծ ուշադրություն է դարձվում քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացմանը, մասնավորապես քաղաքացիական ծառայողների վերապատրաստմանը՝ պետական համակարգում պատրաստված և մրցունակ մասնագետներ ունենալու համար: 2020 թվականից իրականացվում է վերապատրաստման նոր ձևաչափի ներդրում, համաձայն որի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը իրականացվում է առկա և հեռավար ուսուցման միջոցով:

Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված

տեղեկատվական համակարգերի պահպանումը, արդիականացումը և զարգացումը: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվում է՝ Կառավարությանը ենթակա տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված կազմակերպչական բնույթի գործառնությունները: Կառավարությանը ենթակա տեսչական մարմինների կողմից իրականացնում են դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության, բժշկական սպասարկման, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի, թափոնների առաջացման և տեղաբաշխման, կենդանական ու բուսական աշխարհի, հողերի պահպանության, ընդերքի ապօրինի արդյունահանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմի խախտման, կրթության ոլորտում որակի ապահովման, քաղաքաշինական գործունեության, էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության, գեոդեզիայի և հողօգտագործման, տրանսպորտային անվտանգության, հրդեհային և տեխնիկական անվտանգության, սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգությանն վերահսկողությանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև արտադրական կանեփի նկատմամբ վերահսկողության իրականացման շրջանակներում տեխնիկական կանոնակարգին համապատասխան բաղադրության ստուգում:

Վարչապետի աշխատակազմի գծով ծրագրերի շրջանակներում իրականացվում է Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացման և պաշտպանության, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովման գործընթացում Արբիտրաժային և այլ վեճերի շրջանակներում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական, փորձագիտական ծառայությունների, վեճը լուծող հաշտարարի ծառայությունների, ՀՀ շահերից բխող խորհրդատվական բնույթի ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարման ապահովում:

Մարմնի կողմից իրականացվում են նաև միջազգային պայմանագրերի շրջանակներում միջոցառումներ՝ **Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր.**

2021թ. մայիսի 17-ին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրվել է 500,000 ԱՄՆ դոլար գումարի չափով «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի (ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0B4808) համաձայնագիրը, որի միջոցներով 2021-2024թթ. շարունակվելու է աջակցությունը Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը, մասնավորապես, ֆինանսավորվելու են արդյունահանող ոլորտում միջազգային ստանդարտին համապատասխան կոնտեքստուալ և ֆինանսական թափանցիկության ապահովման աշխատանքները, տվյալների համակարգված բացահայտումների ավտոմատացված էլեկտրոնային նորարարական համակարգի ստեղծումը, առաջիկա 2 տարիների ԱՃԹՆ-ի ազգային զեկույցների կազմումը և հրապարակումը, ոլորտի հիմնական շահառուների կարողությունների հզորացման միջոցառումները, բազմաշահառու խմբի կողմից ոլորտի վերաբերյալ հանրային բանավեճի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքները:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության և ծրագրով սահմանված քաղաքականության թյան թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զագացման նպատակների և ցուցանիշների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը		
Քաղաքացիական հասարակության զարգացում	1033 Աջակցություն և հասարակական և այլ կազմակերպություններին	Հասարակական կազմակերպությունների ընդգրկվածություն, քանակ	12	2022թ	12	2023 թ	Չի սահմանված	
Հանրային կապերի՝ պետական մարմինների թափանցիկության՝ տեղեկատվության մատչելիության և ապահովում	1091. Հանրային իրազեկում	Հանրության իրազեկում /տոկոս/	100	2022թ	100	2023թ	Չի սահմանված	
Քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարելավում	1132. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	Վերապատրաստված աշխատակիցների տեսակարար կշիռը՝ տոկոս	30	2022թ	22	2023թ	6. ԻՆՍՏԻՏՈՒՑԻ ՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ 6.10. ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ, էջ 100	
Աջակցել կառավարության, վարչապետի և փոխվարչապետերի	1136. ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման	ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ վարչապետին վերապահված լիազորությունների իրականացման	100	2022թ	100	2023թ	6. ԻՆՍՏԻՏՈՒՑԻ ՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ 6.10. ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ, էջ 100	

գործունեությանը	ան ապահովում	ապահովում, տոկոս						
Նպաստել Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը և զարգացմանը	1156 Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագիր	Համայնքային, երիտասարդական, մասնագիտական, հոգևոր կառույցների հետ աշխատանք (քննարկում, միջոցառում, հանդիպում) քանակ, հատ Սփյուռքի համայնքներ այցերի արդյունքում հայանպաստ միջոցառումների օրակարգերի ձևավորում և նոր կապերի հաստատում, կառույցների թիվ, անհատների թիվ	20	2021	80	2023	1.ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1.4 ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ, էջ 19	
		Հայրենադարձներ, հայրենադարձների ինտեգրում (դիմում, զանգ, նամակ, այց) Ինտեգրման հարցերով աջակցություններ ստացածների թիվ, տոկոս	24	2021	38	2024	. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050-ի գաղափար բաժնի նպատակների «Մեր ազգային արժեքները՝ 4-րդ կետից, . ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության Հայաստան-Սփյուռք. համահայկակա նութան ձևավորում բաժին, . ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կանոնադրությունից	
		Հայրենադարձների ինտեգրում (դիմում, զանգ, նամակ, այց) Ինտեգրման հարցերով աջակցություններ ստացածների թիվ, տոկոս	1000	2021	2500	2023		
		Հայրենադարձների ինտեգրում (դիմում, զանգ, նամակ, այց) Ինտեգրման հարցերով աջակցություններ ստացածների թիվ, տոկոս	50	2021	50	2022		
		Հայրենադարձների ինտեգրում (դիմում, զանգ, նամակ, այց) Ինտեգրման հարցերով աջակցություններ ստացածների թիվ, տոկոս	25	2021	35	2022		

		արտահայտությամբ						
Տեսչական վերահսկողության ապահովում	1213. Տեսչական վերահսկողության ծրագիր	Առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման գծով ստուգման ենթակա տնտեսավարողների կողմից ՀՀ օ ենսդրության պահանջների պահպանման ցուցանիշների բարելավում	2-3%		3-5%			
		Բնապահպանության և ընդերքի գծով ստուգման ենթակա տնտեսավարողների կողմից ՀՀ օ ենսդրության պահանջների պահպանման ցուցանիշների բարելավում	2-3%		3-5%			
		Կրթության գծով ստուգման ենթակա տնտեսավարողների կողմից ՀՀ օ ենսդրության պահանջների պահպանման ցուցանիշների բարելավում	2-3%		3-5%			
		Ոչ պարենային արտադրանքի, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովման	2-3%		3-5%			

		գծով ստուգման ենթակա տնտեսավարողների կողմից ՀՀ օ ենսդրության պահանջների պահպանման ցուցանիշների բարելավում Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման գծով ստուգման ենթակա տնտեսավարողների կողմից ՀՀ օ ենսդրության պահանջների պահպանման ցուցանիշների բարելավում Սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսասանիտարիայի գծով ստուգման ենթակա տնտեսավարողների կողմից ՀՀ օ ենսդրության	2-3%	2022թ	3-5%	2023թ		
--	--	---	------	-------	------	-------	--	--

		պահանջների պահպանման ցուցանիշների բարելավում Մենդամթերքի անվտանգության ապահովում, տոկոս			85%			
Հայաստանում տնտեսական աճին հանքարդյունաբերության ոլորտի նպաստի ամրապնդում	1214. Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր	1. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 2-րդ միջազգային վավերացման արդյունքում Հայաստանի Հանրապետության՝ ԱՃԹՆ-ին համապատասխանելու ամենաբարձր գնահատականի պահպանում, տոկոս 2. Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության համապատասխանեցում ԱՃԹՆ-ի միջազգային ստանդարտներին պահանջներին ԱՃԹՆ ազգային զեկույցների հրապարակման միջոցով, հատ 3. Տվյալների համակարգված բացահայտումների ծրագրային փաթեթի մշակում և	100	2021թ	100	2023թ	Չի սահմանված	
		1	1	2021թ	1	2023թ		
		Առկա է	Առկա է	2021թ	100	2024թ		

		գործարկում, տոկոս						
Տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումնե րի անցկացում ի նպաստ Ազգային ինքնության պահպանման	1221. Տոների և հիշատակի օրերի ծրագիր	Տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ ի անցկացում, քանակ	2	2022թ	2	2023թ		
Սփյուռքի ներուծի բացահայտում , տեղեկատվակ ան համակարգեր ի ստեղծում, ՀՀ զարգացման գործընթացնե րում ներգրավվածո ւթյուն, Հայաստան- Սփյուռք համատեղ ծրագրերի իրականացում , ըստ ոլորտների համահայկակ ան մասնագիտակ ան ցանցերի ստեղծում	1222. ՀՀ զարգացման գործընթացն երում Սփյուռքի ներուծի ներգրավում	1. Սփյուռքահայ անհատների վերաբերյալ հավաքված տվյալների քանակ՝ ըստ անձերի, հատ 2. Ուսումնասիրվո ղ ոլորտների քանակ, հատ 3. Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներ ի արդյունքում ՀՀ այցելած մասնագետներ ի թիվ, մարդ	100 20	2021թ 2021թ 2022թ	100 20 2500	2024թ 2024թ	1.ԱՆՎՏԱՆԳՈՒ ԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈ ԻԹՅՈՒՆ 1.4 ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ, էջ 19 . «Հայաստանի վերափոխման ռազմավարությ ուն 2050»-ի գաղափար բաժնի նպատակների «Մեր ազգային արժեքները» 4- րդ կետից, . ՀՀ ազգային անվտանգությա ն ռազմավարությ ան Հայաստան- Սփյուռք. համահայկակա նության ձևավորում բաժին, . ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատա րի գրասենյակի կանոնադրությո ւնից	
Միջազգային դատարաններ ում,	1223. Միջազգային ն	1. Արբիտրաժային և այլ վեճերի						

միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ վերաբերյալ գործընթացներում մասնակցություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում	դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում	շրջանակներում Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական, փորձագիտական ծառայությունների, վեճը լուծող հաշտարարի ծառայությունների, Հայաստանի Հանրապետության շահերից բխող խորհրդատվական բնույթի ծառայությունների ձեռքբերման վճարման ապահովում, տոկոս 2. Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում, տոկոս	100	2022թ	100	2023թ	5. ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ 5.2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, էջ 79
---	--	--	-----	-------	-----	-------	---

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի շրջանականերում ծախսային գերակայություններ են սահմանվում հետևյալ հիմնական ուղղությունները.

- Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը և ամրապնդումը,
- Հայաստանի Հանրապետության համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, Հայաստանի Հանրապետության անդամակցությունը միջազգային կառույցներին:

Գերակա ժամանակահատվածի նվազման)	Հիմնավորումներ
Վերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը և ամրապնդումը	Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը կնպաստի Հայկական Սփյուռքի հայապահպանությանն ուղղված խնդիրների լուծմանը, ինչպես նաև Սփյուռքում հայկական հարցի միջազգայնացմանը: Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքին դարձել է առավել կազմակերպված ու նպատակային: Անուրանալի է Սփյուռքի դերակատարությունը Հայրենիքում այնպիսի ոլորտների զարգացմանը, ինչպիսիք են՝ զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և ծառայությունները: Շատ է կարևորվում Հայաստանի և Սփյուռքի միջև կրթական՝ մշակութային և երիտասարդական հաղորդակցության՝ ճանաչողության և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը
Հայաստանի միջազգային Հանրապետության կազմակերպությունների հետ, Հայաստանի Հանրապետության անդամակցությունը միջազգային կառույցներին:	Հայաստանի Հանրապետության կողմից կարևորվում է տարբեր միջազգային կազմակերպությունների համագործակցությունն ու անդամակցությունը ի նպաստ Հայաստանի Հանրապետությունում մի շարք ոլորտներում առկա խնդիրների

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը				
--------	--	--	--	--

Ծրագիր	Միջոցառում	Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը ¹	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները ²	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը ³
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1033	11002	Պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում	Հանրային խորհրդի բնականոն գործունեության ապահովում	Մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր,	«Հանրային խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

¹ Ներկայացվում է համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացվող պարտադիր (պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) կամ հայեցողական (հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) պարտավորությունների համառոտ նկարագիրը՝ այդ թվում մատուցվող ծառայությունների, տրամադրող փորձաքննությունների և շահառուների շրջանակը:

² Սյունակը լրացվում է միայն պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների համար:

³ Սյունակում կատարվում են հղումներ պատահական պարտավորությունները սահմանող օրենքների և միջազգային պայմանագրերի կոնկրետ դրույթների վրա, իսկ այդ պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմին վերապահված հայեցողական իրավասությունների դեպքում՝ նաև այդ իրավասությունները սահմանող իրավական ակտերի վրա: Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում կատարվում են հղումներ այդ ծախսային պարտավորությունները սահմանող իրավական ակտերի վրա:

	12001	Պետական աջակցություն ազգային փոքրամասնու թյունների հասարակակա ն կազմակերպու թյուններին	Պետական աջակցություն ազգային փոքրամասնությու նների հասարակական կազմակերպությու ններին	Աջակցություն ստացող ազգային փոքրամասնությունն երի հասարական կազմակերպությունն երի ընտրություն, ֆինանսական միջոցների բաշխումը կազմակերպությունն երի միջև	«Տարածաշրջանային կամ փոքրամասնություններ ի լեզուների եվրոպական Խարտիան» ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 1-ից Ազգային փոքրամասնություններ ի իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա: Ազգային փոքրամասնություններ ի հասարակական կազմակերպություններ ին աջակցությունը տրամադրվում է համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններ ի ազգամշակութային կազմակերպություններ ի համակարգող խորհրդի որոշման
1091	11002	Պետական մամուլի հրատարակում	Պետական մամուլի հրատարակում	Հեռարձակվող նյութերի քանակ	«Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 9-ի N 100 որոշում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 7-ի N 623 որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9- ի N 1506-Ն որոշում

	11004	Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ	Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ	Ձեռք բերվող տեղեկատվության քանակ, Արխիվացվող նյութերի քանակ, հավաքագրվող նյութերի արխիվացման հաճախականություն	«Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 14-ի N 511 որոշում
--	-------	--	---	---	---

	12001	«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճար	ԱՊՀ երկրներում հեռուստառադիո թագրերի հեռարձակում	Հեռարձակվող հեռուստառադիո ծրագրերի քանակ	«Հայաստանի Հանրապետության մշակութային հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության ստեղծման մասին» 1992 թվականի նոյեմբերի 9-ի համաձայնագիր: Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության գործունեության անարգել և ինքնուրույն իրականացման միջազգային-իրավական երաշխիքների մասին համաձայնագիրը վավերացնելու մասին» 1993 թվականի հունվարի 22-ի որոշում «Միր» Միջպետական Հեռուստառադիոընկերության հարցերի մասին հիմնադիր պետությունների կառավարությունների ղեկավարների որոշում» 1995 թվականի նոյեմբերի 11 Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 3-ի N Դ-1212 հանձնարարական
1132	11001	Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	Քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական վերապատրաստման և ուսուցման ծառայություններ	Վերապատրաստվող քաղաքացիական ծառայողների ընտրության շրջանակ	«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդված

1136	11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ քաղաքականության և ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում՝ վերահսկողության կատարման գործընթացում		«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության վարչապետի «Վարչապետի աշխատակազմ ստեղծելու մասին» համար 500-Ա որոշում
	11004	Աջակցություն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը	Ազգային ծրագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքների նախագծերի հաստատման ենթակա փաստաթղթերի կազմում՝ հանրային իրազեկման միջոցառումների իրականացում և դոնոր կազմակերպությունների հետ աշխատանքի համակարգում		Համաշխարհային բանկի հետ 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված համաձայնագրի / ԱՃԳԾԱ Հայաստանի Հանրապետության դրամաշնորհ թիվ TA0A6768/
	11005	Սպասարկման ծառայություններ	ՀՀ Կառավարական շենքերի և այլ գույքի սպասարկում	Սպասարկվող տարածքների քանակ, սպասարկող անձնակազմի քանակ	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 5-ի N 666-Ն որոշում

	11010	ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնների և տարածքների շահագործում և սպասարկում	Պետական գույք հանդիսացող շենքերի, շինությունների և հողատարածքների պատշաճ պահպանվում և օգտագործվում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաների կեցության ապահովում առանձնատներում	Սպասարկվող տարածքների քանակ, սպասարկող անձնակազմի քանակ	«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենք, «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ ստեղծելու մասին ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1635-Ա որոշում
	31001	Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական ան տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում	Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը ՀՀ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում	Միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծման և պահպանման աշխատանքներում երգրավված մասնագետների քանակ	2014 թվականի հոկտեմբերի 10-ին ք.Մինսկում ստորագրված «2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» պայմանագիր: Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի N 217-Ա որոշում
	31002	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում	ՀՀ վարչապետի աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավման նպատակով վարչական սարքավորումների ձեռքբերում		«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: «Վարչապետի աշխատակազմ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի համար 500-Ա որոշում

1213	11001	Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ	Առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողության իրականացում	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման շրջանակներում
	11002	Բնապահպանության ոլորտում վերահսկողության ծառայություններ	Շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների և բնական ռեսուրսների գերշահագործման վերահսկողության իրականացում	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման շրջանակներում
	11003	Կրթության ոլորտում վերահսկողության ծառայություններում	Կրթության ոլորտում տեսչական վերահսկողության ծառայությունների իրականացում	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 729-Լ որոշման շրջանակներում

	11004	Շուկայի վերահսկողության ծառայություններ	Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողություն	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 732-Լ որոշման շրջանակներում
	11005	Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ	Արտադրանքի և ծառայությունների մատուցման ոլորտում տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի վերահսկողության իրականացում	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 732-Լ որոշման շրջանակներում
	11006	Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում վերահսկողության ծառայություններ	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառներում վերահսկողության իրականացում	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման շրջանակներում

	11007	Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ	Սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում վերահսկողության իրականացում, պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերում, ներթափանցման և տարածման կանխարգելում:	Տեսչական մարմնի հաստիքների քանակ, մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշման շրջանակներում
	11010	Տեսչական վերահսկողության շրջանակում սննդամթերքի լաբորատոր հետազոտություն	Սննդամթերքի՝ անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում վերահսկողության իրականացում՝ պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերում՝ ներթափանցման և տարածման կանխարգելում	մարմնի կողմից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված ծախսեր, Մարմնի կողմից իրականացվող ստուգումների ժամանակացույց	«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված: Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշման շրջանակներում

1221	11001	Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձին նվիրված միջոցառումներ	Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձին նվիրված տոնական միջոցառումների կազմակերպում և իրականացում	Միջոցառումների քանակ	«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենք
	11002	Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումներ	Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում և իրականացում	Միջոցառումների քանակ	«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենք
1223	11001	Ներդրումային արբիտրաժային վեճի շրջանակներում Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական, ծառայությունների ձեռքբերում	Ներդրումային արբիտրաժային վեճի շրջանակներում Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական ծառայությունների ձեռքբերում		Միջազգային պայմանագրեր/համաձայնագրեր
	12001	Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում	Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում		Միջազգային պայմանագրեր/համաձայնագրեր
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1091	11001	Հանրային իրազեկում և հասարակական - քաղաքագիտական հետազոտություններ	Կառավարության գործունեության լուսաբանում, թեմատիկ վերլուծություններ և ՀՀՄ-ների ամենօրյա մշտադիտարկում		
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					

1156	11007	Քայլ դեպի տուն	Սփյուռքի հայ երիտասարդության և պատանիների ճանաչողական այցելությունների, հայերենի ուսուցման և հայրենագիտության դասընթացների կազմակերպում		
	11008	Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում	ՀՀ-ի մասին ճանաչողական և համայնքային գործիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, Հայաստանի ներքին քաղաքականությանը իրազեկության ապահովում		
	11010	Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում	Հայաստան-Սփյուռք համագործակցության, հայրենադարձության, Սփյուռքից ներդրումների, Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրերի ներկայացման ուղղություններով հեռուստահաղորդումների, տեսանյութերի պատվիրում և Սփյուռքում արբանյակային հեռարձակում		

	11011	Աշխատանք Սփյուռքի համայնքներ ում	Սփյուռքի համայնքների խնդիրներին մոտիկից ծանոթանալու, դրանց լուծման ուղիների քննարկման, հնարավոր աջակցության տրամադրման, համայնքներում կազմակերպված միջոցառումներին մասնակցության, ՀՀ կառավարության Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ծրագրերի ներկայացման և այլ նպատակներով այցելությունների իրականացում		
	11012	«Ի Գործ» սփյուռքահա յ մասնագետն երի ներգրավում ՀՀ և Արցախի պետական կառավարմ ան համակարգո ւմ	Սփյուռքի բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում ՀՀ և Արցախի հանրային քաղաքականության ուղորտում, ՀՀ զարգացման նոր ծրագրերի մշակում՝ նկատի ունենալով միջազգային փորձը		
	11013	Հայրենադա րժության ինտեգրման կենտրոն	<<Մեկ պատուհան>>ի սկզբունքով համապարփակ ռեսուրս, որը ՀՀ-ում ինտեգրման հարցում աջակցություն կցուցաբերի պոտենցիալ հայրենադարձներին		

	12001	Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջ- ոցներին	Հայկական լրատվամիջոցների, գործող կայք էջերի և հեռուստաալիքների միջոցով հայ ազգաբնակչության շրջանում տարածաշրջանի քաղաքական, սոցիալական, ազգային և մշակութային կյանքի վերաբերյալ տեղեկատվության տարածում		
1213	31001	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ծեռք բերում		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման շրջանակներում
	31002	Կրթության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Կրթության տեսչական մարմնի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ծեռք բերում		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 729-Լ որոշման շրջանակներում

	31003	Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 732-Լ որոշման շրջանակներում
	31004	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման շրջանակներում
	31005	Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման շրջանակներում

	31006	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական հագեցվածության բարելավում	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական և աշխատանքային պայմանների բարելավում		Տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշման շրջանակներում
1222	11003	Համահայկական համաժողովների իրականացում	Համահայկական և համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համաժողովների և խորհրդաժողովների կազմակերպում՝ ի նպաստ Հայաստանի և Սփյուռքի միջև համագործակցության հաստատմանը, համահայկական ցանցերի ստեղծմանը, հայրենադարձությանը		ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 1-ին բաժնի (Անվտանգություն և արտաքին քաղաքականություն) 1.4 մասի «Սփյուռքի հետ կապեր» բաժնի կետերը և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրից բխող գործունեության միջոցառումների ցանկը (Հավելված 1):
	11004	Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում, դրա քարտեզագրում և տեղեկատվական բազայի ստեղծում	Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների իրականացում, Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում, Սփյուռքի վերաբերյալ տեղեկատվական համակարգերի ստեղծում և կատարելագործում, տվյալների մուտքագրում և թարմացում, սփյուռքի մարդկային ներուժի քարտեզագրում		ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 1-ին բաժնի (Անվտանգություն և արտաքին քաղաքականություն) 1.4 մասի «Սփյուռքի հետ կապեր» բաժնի կետերը և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրից բխող գործունեության միջոցառումների ցանկը (Հավելված 1):

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

- «1033» «Աջակցություն հասարակական և այլ կազմակերպություններին»: Ծրագիր շրջանակներում իրականացվում է երեք միջոցառում.

1. «11002» «Պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում» 2022 թվականին ՀՀ պետական բյուջեով Հանրային խորհրդին հատկացված է 12,000.0 հազար դրամ, նշված բյուջեի սահմանում նախատեսված են հետևյալ ծախսերը՝ միջազգային երկու կազմակերպություններում (AICESIS, UCESIF) Հանրային խորհրդի անդամակցության տարեկան պարտադիր վճարներ, Հանրային խորհրդի և Հանրային խորհրդի հանձնաժողովների նիստերին մարզերից եկող Հանրային խորհրդի անդամների և հանձնաժողովների անդամների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, նիստերի կազմակերպում մարզերում, միջազգային համաժողովներին Հանրային խորհրդի անդամների մասնակցության ապահովում, Հանրային խորհրդի միջազգային գործընկեր կառույցներից պատվիրակությունների ընդունում Հայաստանում, խորհրդի ընդլայնված կազմով նիստերի և հանրային լայն քննարկումների կազմակերպման նպատակով դալիճների վարձակալություն, նոր կայքի ստեղծում, կայքի տեղեկատվության թարգմանություն երկու լեզուներով, խորհրդի գրասենյակը ինտերնետով և ֆիքսված հեռախոսակապով ապահովում, նոր բլանկների և ծրարների պատվիրում: **2023-2025 թվականներին Հանրային խորհրդի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ են հետևյալ ծախսերը՝** միջազգային երկու կազմակերպություններում (AICESIS, UCESIF) Հանրային խորհրդի անդամակցության տարեկան պարտադիր վճարներ, Հանրային խորհրդի և Հանրային խորհրդի հանձնաժողովների նիստերին մարզերից եկող Հանրային խորհրդի անդամների և հանձնաժողովների անդամների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, նիստերի կազմակերպում մարզերում, միջազգային համաժողովներին Հանրային խորհրդի անդամների մասնակցության ապահովում, խորհրդի միջազգային գործընկեր կառույցներից պատվիրակությունների ընդունում Հայաստանում, խորհրդի ընդլայնված կազմով նիստերի և հանրային լայն քննարկումների կազմակերպման նպատակով դալիճների վարձակալություն, բլանկների և ծրարների պատվիրում, կայքի սպասարկում, գրասենյակի ֆիքսված հեռախոսակապի և ինտերնետ ծառայության դիմաց ամսական վճարներ: 2022-2024 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 12,000.0 հազար դրամ:

2. «11003» «Աջակցություն հասարակական կազմակերպություններին»: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա: 2022 թվականին նշված նպատակով նախատեսվել է 41,813.0 հազար դրամ: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է համապատասխանաբար՝ 38,941.0, 41,813.0 և 38,941.0 հազար դրամ:

3. «12001» «Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին»: Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին աջակցությունը տրամադրվում է համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգամշակույթային կազմակերպությունների համակարգող խորհրդի որոշման՝ ըստ ՀՀ վարչապետի 2019 թվականի մայիսի 3-ի N 486-Լ որոշման: 2022 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 20,000.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել թվով 11 ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների՝ վերջիններիս կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է 20,000.0 հազար դրամ:

• **«1091» «Հանրային իրազեկում»:** Ծրագրի շրջանակներում իրականացվում են չորս միջոցառում:

1. «11001» «Հանրային իրազեկում և հասարակական - քաղաքագիտական հետազոտություններ»: Միջոցառման շրջանակներում իրականացվում են Կառավարության գործունեության լուսաբանում, թեմատիկ վերլուծությունների և ՀԼՄ-ների ամենօրյա մշտադիտարկում: Միջոցառումն իրականացնում է 2018 թվականից՝ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2022 թվականին միջոցառման իրականացման համար տրամադրվել է 444,810.8 հազար դրամ: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 453,853.2 հազարական դրամ:

2. «11002» «Պետական մամուլի հրատարակում» միջոցառմամբ նախատեսված հատկացումներն ուղղվում են 2 անուն՝ «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի հրատարակմանը: Այս միջոցառումը հնարավորություն է տալիս ազգաբնակչությանը ստանալ հայերեն և ռուսերեն տեղեկատվություն: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տրամադրվել է 84,069.5 հազար դրամ: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը հաջորդաբար կազմում է 109,998.7 հազար դրամ, 138,380.1 հազար դրամ, 175,275.9 հազար դրամ:

3. «11004» «Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ»:

Միջոցառումը հնարավորություն է տալիս բանկչությանը, ՋԼՄ-ներին և պետական հիմնարկներին ստանալ տեղեկատվություն, ապահովել պատմական նշանակություն ունեցող նյութերի պահպանումն և արխիվացումը: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել է 98,187.4 հազար դրամ: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար կազմում է՝ 237,063.9 հազար դրամ, 309,439.9 հազար դրամ, 403,528.7 հազար դրամ:

4. «12001» ««Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճար»:

Միջոցառումը հնարավորություն է տալիս ազգաբնակչությանը ԱՊՀ երկրներից տեղեկատվություն ստանալու և ԱՊՀ երկրներում այն տարածելու: 2020 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ծրագրի ներկայացվել է «11003» «ԱՊՀ երկրներում հեռուստառադիո ծրագրերի հեռարձակում» միջոցառմամբ, որի համար նախատեսված 193,050.0 հազար դրամից 144,787.5 հազար դրամը ՀՀ կառավարության որոշմամբ վերաբաշխման միջոցով ուղղվել է նոր՝ «12001». ««Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճար» միջոցառմանը: Նշված միջոցառման գծով նախատեսված ֆինանսավորման չափը պայմանավորված է ՀՀ Նախագահի 03.07.07թ. N Դ-1212 հանձնարարականի կատարման ապահովմամբ: Նախատեսվող 10% աճին համապատասխան գումարը 2023-2025 թվականներին ուղղվելու է ««Միր» միջպետական հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ-ի գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի իր մասնաբաժնի վճարմանը: «Միր» Միջպետական Հեռուստառադիո ընկերությունը հայկական բաժնեմասով միակ օտարալեզու հեռուստառադիոընկերությունն է, որը հեռարձակում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և փոխադարձ հնարավորություն է տալիս ինչպես ԱՊՀ և մի շարք այլ երկրների բնակչությանը ծանոթանալ հայկական մշակույթին և մշակութային արժեքներին, այնպես էլ Հայաստանի բնակչությանը՝ ծանոթանալ ԱՊՀ մյուս պետությունների մշակույթին և մշակութային արժեքներին: 2022 թվականին նշված միջոցառման համար հատկացվել է 233,590.5 հազար դրամ: 2023-2025 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը՝ հաջորդաբար կազմում է 256,949.6 հազար դրամ, 282,644.5 հազար դրամ, 310,909.0 հազար դրամ:

- **«1132» «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում»:** Ծրագիր շրջանկաներում իրականացվում է մեկ միջոցառում:

«11001» «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծառայություններ»: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին հատկացվել է 16,184.0 հազար դրամ 3000 քաղաքացիական ծառայողի վերապատրաստման համար, քանի որ համակարգում մշտապես առկա է թափուր պաշտոնների շարժ, իսկ կատարողականի 90%-100% արդյունք ունեցող քաղաքացիական ծառայողների համար անհրաժեշտ պարտադիր կրեդիտների շեմ չի սահմանվում: Համաձայն քաղաքացիական ծառայության մասին գործող օրենսդրության, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը պետք է իրականացվի առկա և հեռավար ուսուցման միջոցով: Հաշվի առնելով, որ այս պահի դրությամբ քաղաքացիական ծառայողների հստակ թվաքանակը հայտնի չէ, ենթադրվում է, որ 2023 թվականին վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակը կկազմի մոտավորապես 2000:

2022 թվականին մեկ քաղաքացիական ծառայողի մեկ ժամի վերապատրաստման արժեքը կազմել է 187 ՀՀ դրամ: Առաջարկվում է 2023 թվականին մեկ քաղաքացիական ծառայողի մեկ ժամի վերապատրաստման արժեքը սահմանել 237 դրամ, քանի որ 2020 թվականից հետո ավելացել է մի շարք պարտադիր վճարներ, և բացի այդ ուսումնական հաստատությունները ծառայությունների մատուցման մասով վճարում են ավելացված արժեքի հարկ:

Առաջարկվում է քաղաքացիական ծառայողների 2023 թվականի առկա ուսուցմամբ վերապատրաստման համար նախատեսել 11.376.000 ՀՀ դրամ ($2000 \times 24 \times 237 = 11.376.000$)՝ 24 ժամ տևողությամբ դասընթացների համար, որտեղ 2000-ը կոմպետենցիաների վերաբերյալ առկա ուսուցման ծրագրերով վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակն է:

2023 թվականին նախատեսվում է հեռավար ուսուցման 1 մոդուլի մշակում, որի արժեքը կկազմի 600.000 ՀՀ դրամ, 6 մոդուլի լրամշակում՝ 900.000 ՀՀ դրամ (6×150.000) և 7 մոդուլով (6-ը մշակվել է նախորդ տարիներին) 1000 քաղաքացիական ծառայողի վերապատրաստում: Յուրաքանչյուր մոդուլով նախատեսվում է 6 խմբի վարում (յուրաքանչյուր խմբի համար 4 ժամ առցանց վարում), հետևաբար վարման արժեքը կկազմի 672.000 ՀՀ դրամ ($4000 \times 4 \times 7 \times 6$): 2023 թվականին հեռավար ուսուցման մոդուլներով վերապատրաստման համար նախատեսվում է 2.172.000 ՀՀ դրամ ($600.000 + 900.000 + 672.000$):

Հաշվի առնելով, որ մեկ ժամ առցանց վարման արժեքը հաշվարկվել է 4000 ՀՀ դրամ, մեկ մոդուլի վարման արժեքը վերապատրաստման 1 խմբի համար կկազմի 16000 ՀՀ դրամ, իսկ մեկ մոդուլի լրամշակումը

կկազմի 150.000 ՀՀ դրամ: 2023 թվականին մեկ մոդուլով նախատեսվում է միջինը 6 խմբի վերապատրաստում միջինը 145 քաղաքացիական ծառայողի համար:

2023-2025 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով վերապատրաստման համար ներկայացվող գումարը 2023 թվականի համար կկազմի 13,548.0 ՀՀ դրամ՝ 11,376.0 հազար դրամ առկա ուսուցման և 2,172.0 հազար դրամ հեռավար ուսուցման համար, 2024 թվականի համար ևս 13,548.0, որից՝ 11,376.0 հազար դրամ առկա ուսուցման և 2,172.0 հազար դրամ հեռավար ուսուցման համար, 2025 թվականի համար՝ 13,098.0, որից՝ 11,376.0 հազար դրամ առկա ուսուցման և 1,722.0 հազար դրամ հեռավար ուսուցման համար:

• «1136» «ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»: Ծրագրի շրջանակներում իրականացվում է յոթ միջոցառում:

1. «11001» «Ծառայությունների, ծրագրերի համակարգում»: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 5,348,198.8 հազար դրամ, որի շրջանակներում իրականացվում են Վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերը: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը կազմում է 5,082,132.6 հազարական դրամ:

2. «11004» «Աջակցություն ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությանը»: 2022 թվականին նշված միջոցառման իրականացման համար հատկացվել է 23,600.0 հազար դրամ: Հատկացված միջոցներն ուղղվում են քարտուղարության փորձագետների աշխատանքի վարձատրությանը և միջազգային կազմակերպությանը անդամակցության վճարմանը: 2023-2025 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է 23,600.0 հազար դրամ:

3. «11005» «Սպասարկման ծառայություններ»: Միջոցառման շրջանակներում հատկացված ֆինանսական միջոցներն ուղղվում են 42988 մ² տարածքների սպասարկմանը: Սպասարկումն իրականացվում է «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով, որի հիմնական նպատակն է Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքների ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացումը, Կառավարական N 1 շենքի ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի գրասենյակների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օգտագործվող այլ տարածքներում շենքային պայմանների հետ կապված ընթացիկ աշխատանքների ապահովումը: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 455,714.7 հազար դրամ: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար ևս կազմում է համապատասխանաբար՝ 517,850.0 հազար դրամ, 569,450.0 հազար դրամ, 569,450.0 հազար դրամ:

4. «11010» «ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում»: Միջոցառման շրջանակներում շրջանակներում «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքի սպասարկում և շահագործում, առանձնատներում պաշտոնատար անձանց կեցության ապահովում՝ համապատասխան սպասարկմամբ: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հատկացվող շենքերի և այլ գույքի զբաղեցրած տարածքը կազմում է 18540.9 մ², իսկ հողամասերը՝ 25.31319 հա: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 469,823.5 հազար դրամ: **2023-2025 թվականներին** միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է համապատասխանաբար՝ 539,431.2 հազարական դրամ:

5. «11015» «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ներդրումային և ՊՄԳ ծրագրերի իրականացմանը»: Նշված միջոցառումը ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 27-ի N 811-Ն որոշմամբ Վարչապետի աշխատակազմին է փոխանցվել էկոնոմիկայի նախարարությունից: Միջոցառման շրջանակներում իրականացվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում, ներդրողներին խորհրդատվության և աջակցության տրամադրում, օտարերկրյա ներդրումային ծրագրերին բաժնեմասնակցություն, ՊՄԳ ոլորտի զարգացման խթանում, ՊՄԳ ծրագրերի զարգացման աջակցություն: 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով միջոցառման իրականացման համար հատկացվել է 1,800,000.0 հազար դրամ: 2023-2025 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով ներկայացվող գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է համապատասխանաբար՝ 1,800,000.0 հազարական դրամ:

6. «31001» «Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը ՀՀ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում»: Միջոցառումն իրականացնում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների գրասենյակ» ՓԲԸ-ն: Միջոցառման նպատակն է Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանումը, արդիականացումը և զարգացումն է: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը:

Տարի	Տրամադրող մարմինը	Գումարը (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսը	Կատարված ձեռքբերումները	Ծանոթություն
2019թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000	92.132.000	1. Red Hat Enterprise Linux Server 2 sockets, 1 physical or 2 virtual nodes Standard Subscription և Redhat High Availability Add-On 2. CISCO արտոնագրերի կառավարման փաթեթներ (1 տարի ժամկետով) 3. Սերվերներ 4. ԵԱՏՄ շրջանակներում էլ. փաստաթղթաշրջանառության ծրագրային ապահովում 5. Աշխատված (ԵԱՏՄ բաժնի 4 աշխատակցի համար)	Ձեռք են բերվել նյութական և ոչնյութական ակտիվներ, ծառայություն՝ ինտեգրացիոն շյուզի գործառույթների պատշաճ իրականացնելու համար: Առանձնացվել է աշխատավարձի ֆոնդ՝ ԵՏՀ պահանջներին համապատասխան ՀՀ պետ բյուջեից ֆինանսավորումը կատարվել է փաստացի կատարված ծախսը ներկայացնելուց հետո
2020թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000	92.132.000	1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում 3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում 4. ԵԱՏՄ շրջ. էլ. փաստ. ծրագրային ապահովում	
2021թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000	92.132.000	1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում 3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում 4. ԵԱՏՄ շրջ. էլ. փաստ. ծրագրային ապահովում	
2022թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000	92.132.000	1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում 3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	
2023թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000		1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում 3. Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում 4. ԵԱՏՄ շրջանակներում էլ. փաստաթղթաշրջանառության ծրագրային ապահովում	
2024թ.	Վարչապետի աշխատակազմ	92.132.000		1. Աշխատավարձ 2. Նյութական ակտիվների ձեռքբերում	

